ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի
2007թ. մարտի 16-ին ժամը 16.00-ին կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Անդրանիկ Մարգարյանը

Մասնակցում էին՝
Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի գլխավոր տնտեսական խորհրդական
Հովիկ Աբրահամյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
Կարեն Նազարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամ
Տոնական Ղազարյանը	Շենիկ ՋՕԸ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Ռուզաննա Ղազարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Էդիթ Պետրոսյանը	Հայաստանում «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի օգնական

Սիմոն Ղոնախչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող Երրորդ հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.
   ա/ Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն և Երրորդ հատկացման հայտ,
   բ/ Հատկացման Նախապայմանների հաշվետվություն,
   գ/ ֆինանսական և աշխատանքային պլաններ,
   դ/ Եռամսյակային առաջընթացի հաշվետվություն,
   ե/ Գնումների Կատարման Հաշվետվություն,
   զ/ Գնումների Պլան,
   է/ Մրցույթի վիճարկման ընթացակարգ,
   ը/ Աուդիտի պլան:
2. «Ոռոգման 6 մայր ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթին ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

3. Այլ հարցեր.

- «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի խորհրդատու ընտրված կազմակերպության՝ ACDI/VOCA-ի, 3 /երեք/ առանձին հաշվի համարներ ունենալու վերաբերյալ գրավոր դիմումի քննարկում:

Նիստի ընթացքում օրակարգի.

1-ին հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 3-րդ Հատկացման հայտը, ներառյալ 3-րդ Հատկացման հայտին կցվող ներքոնշյալ փաստաթղթերը և համապատասխան աշխատանքային, ֆինանսական ու գնումների պլանները.

ա/ ՀՄԿ եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը,

բ/ Հատկացման Նախապայմանների հաշվետվությունը,

գ/ Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի, Գյուղական ճանապարհների ենթածրագրի, «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի, Մոնիտորինգի և գնահատման աշխատանքային և ֆինանսական պլանները,

դ/ Եռամսյակային առաջընթացի հաշվետվությունը,
ե/ Գնումների Կատարման Հաշվետվությունը,

զ/ Գնումների պլանը /2007թ. ապրիլի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը/,

է/ Մրցույթների վիճարկման ընթացակարգը,

ը/ Աուդիտի պլանը:

Միաժամանակ որոշվեց՝

բ/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լինսի ծրագրով Համաձայնագիրը ստորագրվել է «Հազարամյակի Մարտահրավեր» Համաձայնագրից հետո, և դրանցում առկա են նախատեսված աշխատանքների որոշ կրկնություններ, լրացուցիչ վերանայել 2 ծրագրերով համընկնող աշխատանքների ծավալները և ներկայացնել համապատասխան առաջարկություն;

գ/ ՀՄԿ վերջնական հաստատմանը ներկայացնելիս հաշվի առնել Մրցույթի վիճարկման ընթացակարգի վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հնարավոր առաջարկությունները և դիտողությունները:

2-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «Ոռոգման 6 մայր ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթին ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

3-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ չբավարարել «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի խորհրդատու ընտրված կազմակերպության՝ ACDI/VOCA-ի, 3 /երեք/ կազմակերպությունների առանձին հաշվի համարներ ունենալու վերաբերյալ գրավոր դիմումը, հաշվի առնելով, որ «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի խորհրդատու ընտրելու մրցույթի գործընթացում այն դիտարկվել է որպես մեկ ամբողջական կոնսորցիում, իր միասնական պարտավորություններով ու պատասխանատվությամբ և մեկ միասնական հաշվի համարով:

Օրակարգի հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ - ՀԱՅԱՍՏԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ — ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ – ՀԱՅԱՍՏԱՆ ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ՊՈԱԿ-Ի ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱՏՈՒ — ՌՈՒԶԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ